Արձանագրություն N 2

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/20.» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 09:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Մարգարյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/20.» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս. թ. նոյեմբերի 13-ին ժամը 09:30-ին:

2. էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

էլեկտրոնային աճուրդն սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. նոյեմբերի 15-ին ժամը 09:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և էլեկտրոնային հասցեները

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեներ
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	tigmangroup@yandex.ru
2	«ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ	gvnllc12@gmail.com
3	Ա/Ձ Ռաիսա Սուքոյան	yanochka81@list.ru

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Նախա-հաշվային գներ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Տիգման Գրուպ» ՍՊԸ	9360000	20 %	11232000	6500000	20 %	7800000	**9720000**
2	«ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ	8000000	20 %	9600000	6650000	20 %	7980000	
3	Ա/Ձ Ռաիսա Սուքոյան	9400000		9400000	9400000		9400000	

5. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

16.11.2018թ. Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը որոշեց՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի և «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի հայտերը ներկայացված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, Ա/Ձ Ռաիսա Սուքոյանի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին: Ա/Ձ Ռաիսա Սուքոյանին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.11.2018թ. ժամը 09:30-ն) համակարգի միջոցով ներկայացնել վերոնշյալ փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի նիստը վերսկսելու վերաբերյալ

Հանձնաժողովի նիստը վերսկսվել է 21.11.2018թ. ժամը՝ 09:30-ին:
Ա/Ձ Ռաիսա Սուքոյանի կողմից որակավորման փաստաթղթերն ուղարկվել են պատշաճ, որոնք ուսումնասիրվելով՝ Հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար:

7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով, համակարգի միջոցով ծանուցել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

9. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվեց Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետի ավարտից հետո, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Պ. Մարգարյան